



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 15 » *Հուլիսի* 2022թ.

№ 1201-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 34-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ և 16-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 34-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության (այսուհետ՝ Վարչություն) կառուցվածքում կատարել հետևյալ անվանափոխությունը.



ա. Վարչության ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և աջակցման բաժինը անվանափոխել ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և տեղեկատվական աջակցման բաժնի,

2) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 21-րդ կետում և 4-րդ գլխի 4-րդ կետում «Ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և աջակցման» բառերը փոխարինել «Ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և տեղեկատվական աջակցման» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

11/15/2022



ՌՌԻՍԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՌԻՍԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ



Պաշտոնական հրապարակման օրը՝ 15 նոյեմբերի 2022 թվական:

